Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3253
3254

28
Մ - 98

# ՔՐԻՍՏՈՍԱՊԱՏՈՒՄ

կամ

# ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ

Սրբազան Պատմութեան

Աւետարանի :

Ի Սներայ Վարժապետէ

Գրիգորեան Օձունացւոյ :

ՌՅԺԵ—1866

Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ.

69884-Ա-Դ

# ՔՐԻՍՏՈՍԱԴԱՏՈՒՄ,

կամ

# ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ

## Սրբազան Պատմութեան

## Աւետարանէ

---

Հ. «Աւետարան» բառս զի՞նչ նշա-
նակէ,

Պ. Աւետիք կամ բարի լուր պարու-
նակող.

Հ. Ո՞յք գրեցին զԱւետարանը.

Պ. Չորս աւետարանիչքն՝ Մատթէոս.

Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս (*)։

Հ. Ի՞նչ ի՞նչ պատմին ՚ի սուրբ Աւետարանի.

Պ. Պատմին

ա. Քրիստոսի Ծնունդն.

բ. Նորա Մկրտութիւնն.

գ. Քարոզութիւնքն.

դ. Հրաշագործութիւնքն.

ե. Չարչարանքն, Մահն, և Թաղումն.

զ. Յարութիւնն.

է. Համբարձումն.

---

(*) Մատթէոս Եբրայեցերէն գրեց. Մարկոս՝ Եգիպտացւոց լեզուաւ. Ղուկաս՝ Ասորւոց. Յովհաննէս՝ Յունաց։



# ԳԼ. Բ.

## Ծնունդ Քրիստոսի։

Հ. Յումմէ՞ ծնաւ Քրիստոս։
Գ. Ի սուրբ կուսէն Մարիամայ։
Հ. Որո՞յ դուստր էր սուրբ կոյսն Մա-
րիամ։
Գ. Յովակիմայ և Աննայի։
Հ. Ո՞վ էր Քրիստոսի հայրն։
Գ. Նա ըստ մարմնոյ հայր չունէր,
բայց կոչեցաւ Որդի Դաւթի, և
Որդի Յովսեփայ։
Հ. Ըստ Աստուածութեան ունէ՞ր
հայր։
Գ. Այո՛. վասն զի Որդի էր Հօր Աս-
տուծոյ։

Հ. Ի՞նչ պատճառաւ Որդի Դաւթի կոչեցաւ.

Պ. Այն պատճառաւ՝ որ նորա մայրն Մարիամ Դաւիթ մարգարէի ցեղէն էր:

Հ. Ի՞նչ պատճառաւ կոչեցաւ Որդի Յովսեփայ.

Պ. Այն պատճառաւ՝ որ Մարեամ նշանուած էր սուրբ Յովսեփայ:

Հ. Սուրբ Յովսէփ յո՞ր ցեղէ էր.

Պ. Նա ևս Դաւիթ մարգարէի ցեղէն էր.

Հ. Ի՞նչ արհեստ գիտէր.

Պ. Հիւսնութիւն.

Հ. Մարիամ ինչո՞ւ համար կոչի Աստուածածին կամ Աստուածամայր:

Պ. Այնո՛ր համար՝ որ ՚ի նմանէ ծնեալ Քրիստոսն՝ ոչ միայն մարդ էր,

այլ և Աստուած, և Որդի Աս-
տուծոյ։

Հ. Քրիստոսի ծնունդն երբ եղև.

Պ. Աշխարհիս ստեղծմանէն չորս հա-
զար տարի յետոյ, Հերովդէս Աս-
կալոնացւոյ ժամանակը։

Հ. Ով էր Հերովդէս։

Պ. Հրէից թագաւոր էր՝ ընդ իշխա-
նութեամբ Հռովմայեցւոց.

Հ. Ո՞ւր նստէր։

Պ. Երուսաղէմ քաղաքումը.

Հ. Հռովմայեցւոց թագաւորն կամ
կայսրն ո՞վ էր այն ժամանակ.

Պ. Օգոստոս։

Հ. Հայոց թագաւորն ո՞վ էր.

Պ. Աբգար՝ Արշամայ որդին.

Հ. Ո՞ր տեղ ծնաւ Քրիստոս։

Պ. Բեթղեհեմ քաղաքի մօտ՝ մի մըս-

րոյ մէջ ։

Հ. Ինչ անուն դրին Քրիստոսի յետ ծննդեան ։

Պ. Ծննդեան ութերորդ օրը անուն դրին նմա Յիսուս ։

Հ. Որ լեզուի բառ է, և զինչ նշանակէ ։

Պ. Եբրայեցւոց լեզուի բառ է, և նշանակէ փրկիչ կամ փրկող ։

Հ. Ով ասաց՝ որ զայդ անունը դնեն ։

Պ. Գաբրիէլ հրեշտակապետն ։

Հ. Երբ ։

Պ. Երբ որ աւետիս տուաւ Մարիամու՝ Քրիստոսի ծննդեան համար ։

Հ. Որոց նախ յայտնեցաւ Քրիստոսի ծնունդն ։

Պ. Հովուաց ։

Հ. Ինչպէս ։

Պ. Գիշեր ժամանակ յերկնից հրեշ-
տակ իջանելով՝ ասաց նոցա

«Ձեզ աւետիք.
Փրկիչ ծնաւ,
Ուրախ եղիք»։

Հ. Բաց յայն հրեշտակէն՝ այլ հրեշ-
տակներ ևս իջա՞ն։

Պ. Այո՛, շատ հրեշտակներ իջան, և
սկսան երգել, «Փառք ՚ի բարձու-
նս Աստուծոյ, և յերկիր խաղա-
ղութիւն, ՚ի մարդիկ հաճութի»։

Հ. Հովիւքն գնացի՞ն զՔրիստոս տե-
սանելոյ։

Պ. Այո՛, վազեցին գնացին ՚ի Բեթ-
ղեհեմ, և գտանելով զՔրիստոս
երկրպագեցին նմա։

Հ. Հեթանոսներէն ո՞վք եկին երկր-
պագելոյ Յիսուսի։

Պ. Նոքա մոգքն, որք էին իմաստուն և թագաւորք պէս հարուստ մարդիկ:

Հ. Յո՞ր կողմից եկին նոքա:

Պ. Յարևելեան հեռաւոր սահմանաց:

Հ. Ինչպէս գիտացին նոքա զՅիսուսի ծնունդը:

Պ. Տեսանելով զնորա աստղը յերկինս:

Հ. Գիտէին՝ թէ ուր է ծնած:

Պ. Ոչ. ուստի երբ հասան Երուսաղէմ, սկսան հարցանել. «Ո՞ւր է նորածին թագաւորն»:

Հ. Հերովդէս լսեց զայդ բանը:

Պ. Լսեց, և շատ վախեցաւ:

Հ. Մոգերուն բան չասա՞ց նա:

Պ. Ասաց՝ որ զնորածին թագաւորը գտանելեն յետոյ՝ իւրեան ևս ծա-

նուացանեն ։

Հ. Ի՞նչ էր միտքն ։

Պ. Այն էր՝ որ զՅիսուսը սպանանել տայ ։

Հ. Ինչո՞ւ համար զայդ չար միտքը ունեցաւ ։

Պ. Այնոր համար՝ որ չլինի թէ Յի-սուս թագաւոր լինելով՝ զիւր թա-գաւորութիւնը յափշտակէ ։

Հ. Մոգքն կարացի՞ն գտանել զՅի-սուսը ։

Պ. Այո՛, գնացին՝ գտին, երկրպագե-ցին նմա և ընծայ տուին ։

Հ. Ի՞նչ ընծայ տուին ։

Պ. Ոսկի, կնդրուկ, և զմուռս ։

Հ. Ի՞նչ է կնդրուկն, և ի՞նչ է զմուռսն ։

Պ. Անուշահոտ խնկոց տեսակք են ։

Հ. Յետոյ Հերովդէսին հանդիպեցա՞ն մոգքն։

Պ. Ո՛չ. այլ՝ ուրիշ ճանապարհաւ դարձան գնացին իւրեանց տեղը։

Հ. Ո՞վ պատուիրեց նոցա՝ որ այնպէս առնեն։

Պ. Հրեշտակն, որ երեւեցաւ նոցա երազի մէջ։

Հ. Չբարկացա՞ւ Հերովդէս՝ երբ որ մոգերէն խաբեցաւ։

Պ. Ինչպէս չէ. այնպէս բարկացաւ՝ որ Բեթղեհեմի սահմանի մէջ գտեալ զերկու տարեկան տղայքը բոլոր ջարդել տուաւ։

Հ. Ի՞նչ դիտաւորութեամբ գործեց զայդ անգթութիւնը։

Պ. Մ՛այն դիտաւորութեամբ՝ որ Յիսուս եւս այն տղայոց հետ սպանուի։

Հ. Կատարեցաւ նորա դիտաւորութիւնն։

Պ. Ո՛չ. վասն զի Յիսուս ազատեցաւ յայն կոտորածէն։

Հ. Ինչպէս։

Պ. Յովսէփ զՅիսուսը մօրը հետ ՚ի միասին փախոյց յԵգիպտոս։

Հ. Ո՞վ պատուիրեց՝ որ այնպէս առնէ։

Պ. Հրեշտակն երեւելով նմա երազի մէջ։

Հ. Որքան ժամանակ մնացին յԵգիպտոս։

Պ. Մինչեւ ցՀերովդեսի մեռանիլն(*)։

Հ. Յետոյ ո՞ւր գնացին։

Պ. Դարձան վերստին ՚ի Հրէաստան, եւ բնակեցան ՚ի Նազարէթ։

Հ. Ուրեմն այդ պատճառաւ Նազովրեցի կոչեցաւ Յիսուս։

Պ. Այո՛։

---

(*) Այսինքն՝ երկու, կամ երեք այլոց՝ եօթն տարի։

# Յաւելուածք

ա. Քառասնօրեայ ընծայումն Քրիստոսի ՚ի տաճարն.

Հ. Ինչպէս եղև ընծայելն Յիսուսի ՚ի տաճարն.

Պ. Մարիամ Աստուածածին առաւ տարաւ զՅիսուսը ՚ի տաճարն՝ երկու տատրակ կամ աղաւնւոյ ձագ հետը ունելով ։

Հ. Աղաւնի կամ տատրակ ինչու համար տարաւ ։

Պ. Պատարագ մատուցանելոյ համար, ինչպէս գրած է Մովսիսական օրէնաց մէջ ։

Հ. Ինչ երևելի անցք պատահեցաւ այն ժամանակը ։

Գ. Տաճարի մէջ էր Սիմէօն ծերունին, որ երբ տեսաւ զՅիսուսը՝ գիրկը առաւ, փառք տուաւ Աստուծոյ, և ասաց. «Տէր, ահա աչքս զՓրկիչը և զհեթանոսաց լոյսը տեսաւ, այսուհետև թող որ մեռանիմ»։

Հ. Աստուածածնին ի՞նչ ասաց։

Գ. Ըսաց զայս բանս. «Ահա քո այդ որդիդ շատ մարդոյ փրկութեան և շատ մարդոց կորստեան պատճառ պէտք է լինի, և քո սիրտդ ևս սուր մտանելու է»։

Հ. Ի՞նչ կամեցաւ յայտնել «Քո սիրտդ սուր մտանելու է» ասելով։

Գ. Զայս՝ թէ «սիրտդ խոց ուտելու է՝ զորդւոյդ չարչարանքը և զՀրէից անհաւատութիւնը տեսանելով»։

Հ. Արդ ո՞վ ևս Սիմէօնի նման՝ զՅի-սուսի փրկիչ լինելը իմացող եղև՞

Պ. Այո. Աննա մարգարէն՝ որ ութ-սուն և չորս տարեկան էր, և տա-ճարէն չէր հեռանայր, սկսաւ փառք տալ Աստուծոյ, և զՅիսուսի փրկիչ լինելը քարոզել։

---

Բ. Վարդապետելն Յիսուսի ՚ի տաճարին երկոտասանամեայ հասակի։

Հ. Յիսուս փոքր մի մեծանալէն յե-տոյ ինչ զարմանալի գործ եցոյց։

Պ. Մի անգամ՝ երբ տասն և երկու տարեկան էր՝ սկսաւ տաճարի մէջ շատ ուսեալ վարդապետաց կամ գիտնոց բան հարցանել և բան խօ-սել այնպիսի իմաստութեամբ, որ լսողքն զարմացան։

---





# ԳԼ. Ի.

## Մկրտութիւն Փրկչին։

Հ. Յումմէ՞ մկրտեցաւ Յիսուս։
Պ. Ի Յովհաննէս Մկրտչէ։
Հ. Յովհաննէս Մկրտիչ ո՞յ որդի էր։
Պ. Զաքարիայ քահանայի, և Եղի-սաբեթի։
Հ. Ո՞ւր բնակէր նա։
Պ. Յանապատումն։
Հ. Ո՞րպիսի կեանք վարէր։
Պ. Ճգնաւորի և մարգարէի պէս։
Հ. Ի՞նչ էր կերած կերակուրն։
Պ. Մարախ, և վայրենի մեղր՝
Հ. Հագած հանդերձն ի՞նչ էր։

Պ. Յուղտու բրդէ.

Հ. Կապած գօտի՞ն.

Պ. Մաշկեղէն, այսինքն՝ կաշիէ.

Հ. Ի՞նչ գործեր յանապատումը.

Պ. Քարոզեր՝ որ մարդիկ ապաշխարեն իւրեանց մեղաց համար.

Հ. Ո տալ քարոզներէն զի՞նչ առնէր.

Պ. Մկրտէր Յորդանան գետոյ մէջ.

Հ. Յիսուս ի մեղաց սրբուելո՞յ համար կամեցաւ մկրտիլ.

Պ. Ո՛չ. վասն զի անմեղ էր.

Հ. Ապա ինչո՞ւ համար.

Պ. Զջուրը սրբելով՝ զմեր մկրտութեան խորհուրդը հաստատելոյ համար.

Հ. Ի՞նչ հրաշալի տեսիլք կամ նշանք պատահեցաւ Յիսուսի մկրտութեան ժամանակը.

Պ. Հոգին սուրբ աղաւնակերպ իջաւ 'ի վերայ նորա. և յերկնից ձայն եկաւ. «Դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ»:

Հ. Քանի՞ տարեկան էր Յիսուս երբոր մկրտեցաւ:

Պ. Երեսուն:

## Յաւելուած

### Յովհաննէս Մկրտիչ:

Հ. Յովհաննու Մկրտչի վերայ ի՞նչ կարծիք ունեցան Հրեայք:

Պ. Կարծեցին՝ թէ նա է Մեսիայն, այսինքն Քրիստոս, որոյ համար գրած էին մարգարէքն:

Հ. Ինքն ինչ ասաց իւրեան համար ։

Պ. Ասաց. «Ես չեմ Քրիստոսն, այլ՝ նորա կարապետն եմ»։

Հ. Զի՞նչ նշանակէ «Կարապետ բառըդ» ։

Պ. Յառաջընթաց, այսինքն՝ առջեւէն գնացող կամ ճանապարհ բացող ։

Հ. Յիսուսի համար ի՞նչ ասաց ։

Պ. Ասաց. «Այս է Աստուծոյ գառնն, որ զաշխարհի մեղքը բառնայ (ջնջէ). նմա հաւատացողն ընդունի կեանք յաւիտենական, եւ չհաւատացողն մնայ Աստուծոյ բարկութեան ներքոյ ։

Հ. Յովհաննէս զՅիսուսը մկրտելէն յետոյ՝ ո՞ւր գնաց, եւ ի՞նչ եղեւ ։

Պ. Երկու տարիի չափ բանտի մէջ արգելեալ մնաց, եւ ապա գլխատե-

ցաւ ։

Հ. Ո՞վ գլխատել տուաւ զնա ։

Պ. Հերովդէս Անթիպաս՝ Գալիլեացւոց աշխարհի Չորրորդապետն ։

Հ. Որո՞յ որդի էր նա ։

Պ. Առաջին Հերովդէսի ։

Հ. Ինչէ նա թշնամի՞ էր Յովհաննու ։

Պ. Այո․ վասն զի Յովհաննէս յանդիմանեալ էր զնա՝ չար գործոցը համար ։

Հ. Ո՞յք թաղեցին զՅովհաննու մարմինը ։

Պ. Իւր աշակերտքն ։

## Գլ. Գ.

Քարոզութիւնք Քրիստոսի ։

Հ. Յիսուս յետ մկրտութեան իւր

գնաց ։

Պ. Յերիքովէն անապատը ։

Հ. Զի՞նչ արար (կամ գործեց) այն տեղ ։

Պ. Քառասուն օր ծոմ պահեց, և փորձիչ սատանային յաղթեց ։

Հ. Յետոյ զի՞նչ ։

Պ. Սկսաւ աշակերտներ ժողովել, քարոզել և ուսուցանել ։

Հ. Աշակերտաց գլխաւորքն ի՞նչ կոչեցան ։

Պ. Առաքեալք ։

Հ. Զի՞նչ նշանակէ բառդ «Առաքեալ» ։

Պ. Յայլ տեղ ուղարկուած ։

Հ. Քանի՞ էին Առաքեալքն ։

Պ. Տասն և երկու ։

Հ. Ասա՛ զնոցա անուանքը ։

Պ. ա̃. Պետրոս ։
բ̃. Անդրէաս ։
գ̃. Յակոբոս ։
դ̃. Յովհաննէս ։
ե̃. Փիլիպպոս ։
զ. Բարթողիմէոս ։
է. Թովմաս ։
ը. Մատթէոս ։
թ. Յակոբոս Ալփեան ։
ժ. Ղեբէոս (որ և Թադէոս) ։
ժա̃. Սիմոն կանանացի ։
ժբ̃. Յուդա Իսկարիովտացի ։

Հ. Յիսուս զի՞նչ քարոզէր ։
Պ. Քարոզէր՝ որ մարդիկ հաւատան իւրեան, ապաշխարեն, առաքինութիւն գործեն, և երկնից արքայութեան արժանի լինին ։

Հ. Առաքինութիւնն ի՞նչ է ։

Պ. Հաստատակօրէն՝ ամենայն գործ որ բարի է և գովելի առաջի Աստուծոյ և մարդկան, առաքինութիւն կոչի ։

Հ. Զի՞նչ ի՞նչ առաքինութիւն ուսոյց Յիսուս՝ իւր քարոզութեանց մէջ

Պ. Ճշմարտութիւն սիրել, սուրբ սրտիւ զԱստուած ճանաչել և հոգւով պաշտել, հեզ՝ խոնարհ՝ համբերող՝ ողորմած՝ խաղաղարար՝ եղբայրասէր կամ ընկերասէր լինել, և այլն ։

Հ. Ա՛յլ ո՞րպիսի խրատներ տուաւ ։

Պ. Զգուշանալ կամ փախչիլ ՚ի կեղծաւորութենէ, ՚ի հպարտութենէ, յոխակալութենէ, ՚ի բամ-

բասելոյ, ՚ի սուտ խօսելոյ, յաւե-լորդ հոգոց, և այլն։

## ԳԼ. Գ.

### Հրաշագործութիւնք Քրիստոսի։

Հ. Յիսուս ո՞րպիսի հրաշքներ գոր-ծեց։

Պ. Զհիւանդները և զցաւագարները բժշկեց։

Զդիւահարները ազատեց։

Խլից ականջները և համր մարդոց լեզուները բացաւ։

Կուրաց աչքերը լուսաւորեց։

Զկաղերը և զանդամալոյծները կանգնեցոյց(ոտքի հանեց), և այլն։

Հ. Ո՞րպիսի դեղեր գործ ածեր Յի-սուս՝ բժշկութիւն կատարելոյ ժա-

մանակը ։

Պ. Դեղ գործ չէր ածեր, այլ միայն իւր Աստուածային կարողութեամբ և հրամանաւ հրաշագործեր ։

Հ. Յիսուսի գործած հրաշքներուն առաջինն ո՞րն եղև ։

Պ. Զջուրը 'ի գինի փոխելն ։

Հ. Յո՞ր տեղ և ե՞րբ եղև այդ հրաշագործութիւնդ ։

Պ. Կանա Գալիլեացւոց ասացեալ քաղաքումը՝ երբ որ Յիսուս մօրը հետ 'ի միասին հարսանեաց մէջ նստած էր ։

Հ. Ի՞նչպէս եղև ։

Պ. Հարսանեաց ուրախութեան ժամանակը գինին պակասեցաւ. Մարիամ յայտնեց Յիսուսին. Յիսուս ևս մօր խօսքը պատուելոյ համար՝

հրամայեց ծառայից՝ որ դատարկ փարչերը ջրով լցնեն. և լցնելէն յետոյ տեսին՝ որ պատուական անոյշ գինի եղած է ։

Հ. Քանի՞ հատ էին այն փարչերն, և որչափ գինի կարէին պարունակել։

Պ. Վեց հատ էին, և իւրաքանչիւրն երկու կամ երեք մար (*) գինի պարունակեր ։

---

(*) Մա՛ր՝ չափոյ անուն է. Ռուսերէն՝ (վէտրօ) ։

Հ. Ա՞յլ կերպ հրաշքներ ևս գործեց Յիսուս:

Պ. Ինչպէս չէ. զծովու կատաղած ալեքը՝ և զսաստիկ հողմը՝ մի խօսքով դադարեցոյց. ծովու վերայ ոտիւք քայլեց. և երկու անգամ ևս քիչ հացը բազմացոյց՝ միայն օրհնելով:

Հ. Յառաջին անգամին զքանի՞ հացը բազմացոյց:

Պ. Զհինգ հացը, և զերկու ձուկը:

Հ. Քանի՞ մարդ կերան այն հացերէն և ձկներէն:

Պ. Հինգ հազար մարդ՝ բաց ՚ի կանանց և ՚ի փոքր տղայոց:

Հ. Կարացի՞ն կշտանալ:

Պ. Այո. այնպէս կշտացան, որ տասն և երկու սակառի ևս հացի կտորուանք

վերցուցին ։

Հ. Յերկրորդ անգամին զքանի՞ հացը բազմացուց ։

Պ. զԵօթն հացը՝ քանի մի ձկան հետ ։

Հ. Քանի՞ հոգի կերան կշտացան այն հացերէն և ձկներէն ։

Պ. Չորս հազար հոգի՝ բաց ՚ի կանանց և ՚ի փոքր տղայոց ։

Հ. Ո՞րքան հացի կտորուանք յաւե֊
լացան ։

Պ. Եօթն զամբիւղ լի՛ ։

Հ. Մեռած մարդ ևս յարո՞ց Յիսուս ։

Պ. Այո՛, երեք ևս մեռած մարդ յա֊
րուց ։

Հ. Ո՞վ էր այն մեռածներու առաջինն ։

Պ. Յայրոս իշխանի տասն և երկու տա֊
րեկան աղջիկն էր ։

Հ. Ո՞վ էր երկրորդն ։

Պ. Մ՞ի այրի կնոջ մի հատիկ որդին էր՝ Նային քաղաքումը:

Հ. Երրորդն ո՞վ էր:

Պ. Ղազարոսն էր՝ Յիսուսի բարեկամըն, որ ՚ի Բեթանիա գիւղն նստէր:

Հ. Ի՞նչպէս յարոյց Յիսուս զՅայրոսի աղջիկը:

Պ. Բռնեց ձեռնէն, և ասաց «Տալիթա, կումի»:

Հ. Այդ խօսքդ զի՞նչ թարգմանի:

Պ. Ա՛յ աղջիկ (քե՛զ ասեմ) կանգնի՛ր (վե՛ր կաց):

Հ. Ո՞ր լեզուի բառք են:

Պ. Եբրայեցւոց:

Հ. Ի՞նչպէս յարոյց Յիսուս զայրի կնոջ որդին:

Պ. Երբ տանէին զնա թաղելոյ, մօտեցաւ Յիսուս դագաղին, և ասաց մե-

ուելէն. «Քէ՛զ ասեմ, կանգնէ՛ր». և իսկոյն կանգնեցաւ նստաւ մեռեալն։

Հ. Զ Ղազարոսն ես չթաղուա՞ծ յարոյց Յիսուս։

Պ. Ո՛չ. այլ՝ մեռանելէն և թաղուելէն չորս օր յետոյ։

Հ. Զի՞նչ ասաց յարուցանելոյ ժամանակը։

Պ. Զայս բանս՝ բարձր ձայնիւ. «Ղա՛զարէ, արի՛ էկ արտաքս»։

Հ. Լսե՞ց Ղազարոս զայն ձայնը։

Պ. Լսեց, և իսկոյն ելաւ կանգնեցաւ (*)։

Հ. Ձեռքն և ոտքն կապած չէի՞ն։

Պ։ Կապած էին, բայց Յիսուս հրամայեց՝ որ արձակեն։

---

(*) Ղազարոս նոր կենդանութիւն ստանալէն յետոյ 15 տարի ևս ապրեցաւ, բայց ամենևին չծիծաղեցաւ, ասեն։

# Յաւելուածք

## ա. Այլակերպութիւն Քրիստոսի.

Հ. Յիսուս զիւր Աստուածային փառքը ո՞րպիսի նշանաւ կամ տեսիլքով երեւեցոյց աշակերտաց։

Պ. Այլակերպելով, այսինքն՝ զիւր կերպարանքը փոխելով։

Հ. Յո՞ր տեղ.

Պ. Թաբօր լեռան վրայ։

Հ. Ո՞ր աշակերտաց առջեւ։

Պ. Պետրոսի, Յակոբու, եւ Յովհաննու։

Հ. Ի՞նչպէս այլակերպեցաւ։

Պ. Երեսքն երեւեցան արեւու նման, եւ հանդերձքն ձիւնի նման սպիտակ եւ փայլուն.

Հ. Այն տեսիլքի մէջ այլ մարդիկ ևս երևեցա՞ն։

Պ. Այո՛, Մովսէս և Եղիա մարգարէքն երևեցան։

Հ. Աշակերտաց հետ խօսեցա՞ն։

Պ. Ոչ. այլ՝ միայն Յիսուսի հետ խօսեցան՝ նորա չարչարանաց և մահուան վերայ։

Հ. Յետոյ ի՞նչ եղև։

Պ. Լուսաւոր ամպ իջաւ՝ և ծածկեց զնոսա, և յերկնից ձայն եկաւ. «Դա՛ է որդի իմ սիրելի, դմա լուարուք»։

Հ. Աշակերտքն երբ որ զայդ տեսին՝ ի՞նչ եղեն։

Պ. Զարմացան՝ վախեցան՝ և երես ՚ի վայր անկան. բայց Յիսուս բռնեց կանգնեցոյց զնոսա։

Հ. Երկա՞ր տևեց այդ հրաշալի տե-սիլքն ։

Պ. Ո՛չ. վասն զի երբ որ կանգնեցան աշակերտքն, տեսին որ բաց ՚ի Յիսուսէ՝ ո՛չ ո՛ք չկայ։

## Բ. Թշնամիք Յիսուսի։

Հ. Զ Յիսուսի հրաշքները տեսողքն և զքարոզութիւնները լսողքն՝ հաւատացի՞ն նորա Աստուածութեանը։

Պ. Ոմանք հաւատացին, և ոմանք՝ ո՛չ։

Հ. Ո՞յք էին չհաւատացողքն։

Պ. Նորա Թշնամիքն, որք էին՝ դպիրքն, փարիսեցիքն, քահանայքն, աշխարհաւէր իշխանքն, և ծերքն։

Հ. Ո՞յք էին դպիրքն։

Պ. Հրէից վարդապետքն և կարդա-
ցողքն :

Հ. Իսկ Փարիսեցի՞քն :

Պ. Փարիսեցի կոչէին նոքա՝ որք քան
զայլս օրինապահ և արդար համա-
րէին զինքեանս :

Հ. Առաքինի՞ մարդիկ էին նոքա :

Պ. Ոչ. այլ՝ կեղծաւոր՝ հպարտ՝ ա-
գահ՝ և խաբեբայ մարդիկ էին :

Հ. Ժողովուրդքն պատիւ տայի՞ն Յի-
սուսի :

Պ. Ժողովրդոց շատերն՝ որ լսած կամ
տեսած էին զՅիսուսի հրաշագոր-
ծութիւնները, ցանկային հետևիլ
նմա, և փառաւորել զնորա անունը :

Գ. Գալուստ Քրիստոսի յԵրուսաղէմ։

Հ. Ե՞րբ առաւել հռչակեցաւ Յիսուսի անունն.

Պ. Երբ որ էշոյ և յաւանակի վերայ նստած՝ յԵրուսաղէմ մտաւ։

Հ. Ի՞նչպէս եղև այդ։

Պ. Ժողովուրդն երբ որ լսեցին՝ թէ Յիսուս գայ, արմաւենւոյ և ձիթենւոյ ճիւղեր ձեռքերնին բռնած՝ ընդ առաջ ելին, և հանդերձնին գետնի վերայ տարածելով՝ մեծըն և փոքրն՝ սկսան աղաղակել. «Ովսաննա, օրհնեա՜լ որ գաս յանուն Տեառն, Թագաւորդ Իսրայէլի»։

Հ. Զի՞նչ նշանակէ «Ովսաննա» բառդ։

Պ. Յեբրայեցւոց լեզուի նշանակէ «Ո՛վ Յեսու կամ Յիսուս, փըր-կեա՛ զմեզ», և կամ «Փրկութիւն ի բարձանց»։

## Գլ. Ժ

Չարչարանք, Մահ, և Թաղումն Քրիստոսի.

Հ. Յիսուս՝ իւր չարչարանաց և մա-հուան համար յառաջագոյն բան ա-սա՞ց աշակերտացն։

Պ. Ասաց՝ թէ երկու օրից յետոյ զա-տիկ լինի. և ինձ պարտ է չարչա-րիլ և մեռանիլ

Հ. Ապա՞ այդ։

Պ. Այո. վասն զի Յիսուսի թշնամիքն քահանայապետի տան մէջ ժողովելով խորհուրդ արարին, որ բռնեն զՅիսուս և սպանանեն:

Հ. Ի՞նչ էր այն քահանայապետի անունն.

Պ. Կայիափա:

Հ. Ո՞վ մատնեց կամ բռնել տուաւ զՅիսուս.

Պ. Յուդա իսկարիովտացին, որ Յիսուսի աշակերտաց մին էր:

Հ. Յուդայի այդպիսի ապերախտութեան պատճառն ի՞նչ էր:

Պ. Իւր ագահութիւնն կամ արծաթսիրութիւնն.

Հ. Ուրեմն Յիսուսի թշնամիքն փո՞ղ խոստացած էին Յուդայի:

Պ. Այո՛, խոստացած էին երեսուն

արծաթ տալ, և տուին։

Հ. Գիտէ՞ր Յիսուս՝ որ Յուդա մատ-նելոց է զինքն։

Պ. Գիտէր, բայց չկամեցաւ անունը տալով յայտնել։

Հ. Առանց անունը տալոյ յայտնե՞ց։

Պ. Այո՛. վասն զի այսպէս ասաց աշա-կերտացն. «Ձեր միջէն մինն մատ-նելո՛ց է զիս»։

Հ. Ե՞րբ ասաց զայդ բանը։

Պ. Բաղարջակերաց տօնի յառաջին ե-րեկոյին՝ երբ սեղանումը նստած էին։

Հ. Աշակերտքն չհարցուցի՞ն՝ թէ ո՞վ է։

Պ. Հարցուցին. և Յիսուս ասաց «Այն՝ որ պատառը թաթխեմ՝ տամ՝ նա՛ է»։

Հ. Ո՞ւմ տուաւ :

Պ. Յուդային տուաւ՝ ասելով «Գնա՛, ինչ որ առնելոց ես՝ արա՛ շուտով»:

Հ. Գնա՞ց այն ժամանակը Յուդա :

Պ. Այո՛, գնաց շիտակ քահանայապետաց և դպրաց մօտ, և խոստացաւ նոցա զՅիսուս մատնել :

Հ. Այնուհետև ի՞նչ արար Յիսուս:

Պ. Սկսաւ աշակերտաց մխիթարական բաներ խօսիլ, և պարտիզումն առանձնանալով՝ աղօթել .

Հ. Ի՞նչպէս կատարեց Յուդա զիւր չար կամքը :

Պ. Սէս գիշերին քահանայապետի ծառայից՝ և զինուորաց հետ ՚ի միասին եկաւ Յիսուսի եղած տեղը, և բռնել տուաւ զնա :

Հ. Ի՞նչ նշանաւ կարացին ճանաչել

զՅիսուս ։

Պ. Յուդայի ցուցած նշանաւ ։

Հ. Ի՞նչ նշան ցուցած էր Յուդա ։

Պ. Նշան ցուցած էր՝ թէ ում որ ինքն համբոյր տայ՝ նա է Յիսուսն ։

Հ. Երբ որ Յուդա համբուրեց զՅիսուս, Յիսուս ի՞նչ ասաց ։

Պ. Այս բանս. «Յո՛ւդա, դու զիս համբուրելո՞վ մատնես» ։

Հ. Յուդա չզղջացա՞ւ իւր գործած անօրէնութեան համար ։

Պ. Զղջացաւ, և առած արծաթը տարաւ տուաւ քահանայապետուց և ծերոց՝ ասելով. «Մեղանչեցի ես՝ որ զարդար արիւն մատնեցի» ։

Հ. Ի՞նչ պատասխան տուին նմա քահանայապետքն ։

Պ. «Դու գիտես, ասացին, այդ մեզ

հոգ չէ՞»։

Հ. Ներողութիւն խնդրե՞ց Յուդա ի Յիսուսէ։

Պ. Ո՛չ. այլ բոլորովին յուսահատած, զարծաթը տաճարի մէջ ձգելէն յետոյ՝ գնաց ինքը զինքը կախեց ու կորեաւ հոգւով և մարմնով։

Հ. Քահանայապետքն առի՞ն զայն արծաթը։

Պ. Առին, բայց՝ որովհետև արեան գին էր՝ արժան չհամարելով տաճարի կորբանը կամ գանձանակը ընդունել, գնեցին անով փոքրիկ ագարակ կամ գետին մի՝ օտարականաց գերեզմաննոց շինելոյ համար (*)։

Հ. Երբ որ զՅիսուս բռնելոյ եկան, աշակերտքն զի՞նչ արարին։

Պ. Կամեցան կռուիլ թշնամեաց հետ.

Պետրոս և Մաղքոսի աջ ականջը սրով զարկաւ կտրեց։

Հ. Յիսուս յօժա՞ր էր այդպիսի վրէժխնդրութեան։

Պ. Ո՛չ. ուստի ասաց աշակերտացն. Սուրերը տեղը դրէք. ես՝ եթէ կամենամ՝ կարօղ եմ տասն և երկու գունդէն աւելի հրեշտակներ իջուցանել յերկնից։

Հ. Մաղքոսն ո՞վ էր։

Պ. Քահանայապետի ծառայն էր։

Հ. Նորա ականջն կտրա՞ծ մնաց։

Պ. Ո՛չ. վասն զի Յիսուս իսկոյն բժշկեց։

(*) Այս տեղս կոչեցաւ այնուհետև Ասորւոց լեզուաւ Ակեղդամա, որ թարգմանի «գեօղ արեանն» (Գործ. ա. 19)։

Հ. Ո՞ւր տարան զՅիսուս՝ բռնելէն յետոյ :

Պ. Նախ Աննա քահանայապետին՝ և ապա Կայիափայ քահանայապետին մօտ՝ որ դատուի :

Հ. Յիսուսի աշակերտքն ի՞նչ եղեն :

Պ. Փախեան ցրուեցան. միայն Պետրոս և Յովհաննէս Յիսուսի ետևէն գնացին, և մտին Կայիափայի տունը :

Հ. Այն ժամանակը ի՞նչ պատահեցաւ Պետրոսին :

Պ. Զիւր Յիսուսի աշակերտ լինելը՝ երեք անգամ ուրացաւ, ինչպէս յառաջագոյն ասած էր Յիսուս :

Հ. Յետոյ չզղջացա՞ւ :

Պ. Զղջացաւ, և շա՛տ արտասուեց :

Հ. Կայիափայի տան մէջ ո՞րքան ժամանակ մնաց Յիսուս :

Պ. Ո՛ղջ զինուորը այն տեղ պահեցին զնա, և շատ չարչարեցին՝ երեսին Թքնելով, ապտակելով, ծաղր առնելով, և այլն:

Հ. Յառաւօտուն ո՞ւր տարան:

Պ. Պիղատոսի մօտ:

Հ. Ինչո՞ւ համար:

Պ. Սպանանելոյ հրաման առնելոյ համար:

Հ. Պիղատոս ո՞վ էր:

Պ. Դատաւոր էր Հրէաստանի՝ Հռովմայեցւոց կողմանէ դրուած:

Հ. Ո՞ւր տեղացի էր:

Պ. Պոնտացի:

Հ. Նա շուտով հրաման տուա՞ւ ըզՅիսուս ըսպանանելոյ:

Պ. Ո՛չ. վասն զի քննեց իմացաւ՝ որ Յիսուս անմեղ է. բայց ուղարկեց զնա Հերովդէսի մօտ՝ որ նա

ևս քննէ ։

Հ. Հերովդէս ինչ արար ։

Պ. Յիսուսին քանի մի բան հարցոյց, և կամեցաւ ևս՝ որ Յիսուս իւր առջևը հրաշք գործէ ։

Հ. Կատարեց Յիսուս զնորա կամքը ։

Պ. Ոչ. վասն զի ո՛չ հրաշք գործեց, և ո՛չ հարցմանցն պատասխան տուաւ ։

Հ. Յետո՞յ ։

Պ. Հերովդէս բարկանալով Յիսուսի լուռ կենալուն համար, վերայն սպիտակ շոր ձգել տուաւ, և ուղարկեց դարձեալ Պիղատոսի մօտ ։

Հ. Պիղատոս այն ժամանակ զՅիսուս ազատելու համար՝ հնարքներ ՚ի գործ չածե՞ց ։

Պ. Շատ հնարքներ ՚ի գործ ածեց,

բայց օգուտ չեղաւ ։

Հ. Ինչո՞ւ համար ։

Պ. Անոր համար՝ որ Յիսուսի թշնամիքն այնպէս կատաղած էին, որ ամենքն միաբերան աղաղակէին. «Ի խաչ հան, ի խաչ հան զդա» ։

Հ. Երբ որ զայդ լսեց Պիղատոս՝ զի՞նչ արար ։

Պ. Ան բազմութեան առջևը լուաց ջրով ըզձեռները, և ասաց «Ես այդ արդար մարդոյ արիւնէն քաւեա՛լ եմ» ։

Հ. Հրէայք զի՞նչ պատասխանեցին ։

Պ. Պատասխանեցին թէ «Անորա արիւնն մե՛ր վերայ և մեր որդւոց վերայ թո՛ղ լինի» ։

Հ. Ուրեմն Պիղատոս հրաման տուաւ զՅիսուս սպանանելոյ ։

Պ. Այո՛։

Հ. Ո՞րպիսի մահուամբ սպանեցին ըզՅիսուս։

Պ. ՚Ի խաչ հանելով։

Հ. Յո՞ր տեղ։

Պ. Գողգոթա ասացեալ տեղը՝ քաղաքէն դուրս։

Հ. Զյիսուսի խաչը ո՞վ տարաւ ՚ի Գողգոթա։

Պ. Առաջ Յիսուսի քամակը դրին. յետոյ առին Սիմոն կիւրենացին (*) տուին՝ որ նա տանի։

Հ. Ինչո՞ւ համար այդպէս արարին։

Պ. Անոր համար՝ որ վախեցան, չըլնի թէ Յիսուս չխաչուած՝ ՚ի ճանապարհին մեռանի։

(*) Սա Հրէայ չէ՛ր, այլ յոտար մէկ է և պանդուխտ, որ յայն ժամանակը յիւր ագարակէն ՚ի քաղաքն գայր (Մարկ. ժե. 21.)

Հ. Ա՞յլ մարդ եւս խաչեցի՞ն Յիսուսի հետ:

Պ. Ա՛յո, երկու մարդ եւս խաչեցին, զմինը Յիսուսի մի կողմը, եւ զմիւսը՝ միւս կողմը:

Հ. Ի՞նչպէս մարդիկ էին նոքա:

Պ. Երկուքն եւս չարագործ աւազակներ էին. բայց մինն՝ որ Յիսուսի աջ կողմն էր՝ Արքայութեան արժանի եղեւ:

Հ. Ի՞նչպէս:

Պ. Երբ որ միւս ընկերն խաչի վրայէն նախատէր զՅիսուս, ինքն յանդիմանեց զնա. եւ Յիսուսի Աստուածութեանը հաւատալով՝ ասաց. «Տէր, զիս յիշէ՛ ինչ ժամանակ քո Թագաւորութեամբդ գաս»: Եւ Յիսուս ասաց նմա. «Այսօր իմ հետ

Ի մասին Դրախտի (այսինքն՝ Ար-քայութեան) մէջ լինելոց ես»։

Հ. Երբ որ զՅիսուս խաչեցին, զնո-րա հանդերձքը ինչ արարին։

Պ. Զինուորքն առին բաժանեցին իւր-եանց մէջ՝ չորս կտոր պատառելով։

Հ. Զպատմուճանը և՞ս պատառեցին։

Պ. Ոչ. այլ՝ վիճակ ձգեցին անոր համար։

Հ. Ի՞նչ պատճառաւ չպատառեցին։

Պ. Այն պատճառաւ՝ որ հիւսած էր՝ առանց կարի։

Հ. Յիսուսի խաչին վերայ ինչ էր գրած։

Պ. Պիղատոս գրել տուած էր զայս բանս. «Յիսուս Նազովրեցի, Թա-գաւոր Հրէից»։

Հ. Ո՞ր ազգի լեզուաւ և գրով։

Պ. Եբրայեցերէն, Դաղմատերէն (այսինքն՝ Լատիներէն), և Յունարէն։

Հ. Յիսուսի ա՞յլ ինչ չարչարանք տուին՝ խաչի վրայ եղած ժամանակը։

Պ. Երբ որ «Ծարաւի՛ եմ» ըսաց Յիսուս, ջրոյ տեղ՝ քացա՛խ տուին նմա՝ լեղիով խառնած։

Հ. Յիսուս ինչպէս աւանդեց զիւր հոգին։

Պ. Բարձր ձայնիւ զայս բանս ասելով. «Հա՛յր, ՚ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ»։

Հ. Յիսուսի խաչի վրայ եղած ժամանակը և մահուան ժամուն ինչ երևելի նշաններ եղէն՝ զնորա Աստուածութիւնը յայտնելու համար։

Պ. Արեգակն խաւարեցաւ՝ արտաքոյ կարգի. տաճարի վարագոյրն ինքնին

պատառեցաւ վերէն 'ի վայր. գետնաշարժ եղև. ապառաժ քարեր ճեղքեցան. գերեզմաններ բացան. մեռեալներ ողջացան։

Հ. Ուրիշ ի՞նչ։

Պ. Երբ որ զինուորաց մինն ծակեց նիզակով զՅիսուսի կողը՝ արիւն և ջուր ելաւ։

Հ. Զարեգական խաւարումն ինչո՞ւ համար «արտաքոյ կարգի» ասացեր։

Պ. Անոր համար՝ որ այն ժամանակ լուսնի լրումն լինելով՝ արեգական խաւարման ժամանակ չէր (*)։

Հ. Յիսուսի մարմինն քանի՞ ժամ խաչի վերայ մնաց։

(*) Վասն զի արեգական խաւարումն բնականապէս 'ի լուսնի ծննդեանն պատահի։

Պ. Երեք ժամէն աւելի, կամ երբ չորս ժամ (**)։

Հ. Ո՞վ 'ի վայր առաւ կամ իջոյց 'ի խաչէն։

Պ. Յովսէփ Արեմաթացին, և Նիկոդեմոս։

Հ. Ո՞րպիսի մարդիկ էին նոքա։

Պ. Հրէից իշխանք էին, և ծածուկ աշակերտք Յիսուսի։

Հ. Ո՞ւր թաղեցին զՅիսուսի մարմինը։

Պ. Յովսէփ Արեմաթացւոյ պարտիզումը մի նորափոր քարեայ գերեզմանի մէջ։

Հ. Հրեայք՝ յետ Յիսուսի թաղման զի՞նչ զգուշութիւն արարին։

---

(**) Վասն զի վեցերորդ ժամու (այսինքն՝ կէսօրի) մօտ՝ խաչեցաւ. յիններորդ ժամուն հոգին աւանդեց, և այնուհետև թաղումն եղև։

Պ. Պահապան զինուորներ դրին՝ զգե-րեզմանը պահելոյ համար, և զգե-րեզմանի դրան քարը կնքեցին:

Հ. Ինչո՞ւ համար:

Պ. Անոր համար՝ որ չըլնի թէ զմար-մինը գողնան:

---

## Յաւելուած

ա. Սահմանումն խորհրդոյ Հաղորդութեան:

Հ. Յիսուս Բաղարջակերաց տօնի յա-ռաջին երեկոյին զի՞նչ խորհուրդ աւանդեց:

Պ. Զհաղորդութեան խորհուրդը, որով զիւր մարմինը և արիւնը տուաւ աշակերտաց:

Հ. Ի՞նչպէս տուաւ զմարմինը։

Պ. Առաւ հաց՝ օրհնեց՝ կտրեց՝ և ա-
շակերտաց բաժանեց՝ ասելով. «Ա-
ռէ՛ք կերէ՛ք, այս է իմ մարմինս»։

Հ. Զարիւնը ի՞նչպէս տուաւ։

Պ. Առաւ բաժակ (այսինքն՝ գաւա-
թով գինի)՝ օրհնեց՝ և ասաց. «Ար-
բէք ՚ի սմանէ, այս է իմ արիւնս»։

Հ. Պատուիրեա՞ց աշակերտաց՝ որ նոքա
ևս զայն խորհուրդը կատարեն։

Պ. Այո՛, «Զայս արարէք, ասաց, զիս
յիշելոյ համար»։

## Է. Ոտնլուայ.

Հ. Յիսուս զհաղորդութեան խոր-
հուրդը աւանդելէն յառաջ՝ ի՞նչ
առաքինութեան օրինակ եցոյց։

Պ. Խոնարհութեան ։

Հ. Ինչպէս եցոյց ։

Պ. Զաշակերտաց ոտները լուանալով ջրալից կոնքի (լականի) մէջ ։

Հ. Յետ լուանալոյն զի՞նչ պատուէր տուաւ ։

Պ. «Ինչպէս ես ձեզ արարի, ասաց, այնպէս և դուք միմեանց արարէք» ։

## ԳԼ. Զ.

### Յարութիւն Քրիստոսի ։

Հ. Յիսուս ե՞րբ յարեաւ ։

Պ. Մահուան երրորդ օրը, այսինքն շաբաթ գիշերը՝ դէպ 'ի լոյս կիւրակէի ։

Հ. Գերեզմանի պահապանքն ինչ ե-

ղեն ։

Պ. Ո՞րպէս վախեցան սարսափեցան, որ մեռելի պէս փռուեցան գետնի վերայ։

Հ. Ո՞վ վախեցոյց զնոսա ։

Պ. Հրեշտակն, որ յանկարծ ահաւոր լուսափայլութեամբ յերկնից իջանելով՝ գերեզմանի դրան քարը գլորեց, և նստաւ նորա վերայ ։

Հ. Յիսուսի յարութեան համբաւն շուտ տարածեցա՞ւ ։

Պ. Այո․ վասն զի պահապանաց մի քանին վազեցին գնացին քաղաքը, և պատմեցին քահանայապետոց ։

Հ. Քահանայապետքն զի՞նչ արարին՝ երբ զայդ բանը լսեցին ։

Պ. Զ Յիսուսի յարութիւնը սուտ կարծեցուցանելոյ համար՝ պահապանաց

շատ փող տուին, որ ասեն՝ թէ Յի-
սուսի աշակերտքն գիշերը եկին գո-
ղցան զմարմինը՝ երբ որ մեք քնած
էաք։

Հ. Յետ յարութեան որո՞ց երեւեցաւ
Յիսուս։

Պ. Նախ՝ Մարիամու Մագդաղենաց-
ւոյ, ապա՝ այլոց, և ապա շատ ան-
գամ եւս իւր աշակերտաց՝ մինչև
ցքառասուն օր։

Հ. Աշակերտաց զի՞նչ պատուէր տո-
ւաւ։

Պ. Երթալ յամենայն աշխարհ, քարո-
զել զԱւետարանը, և զհաւատա-
ցողները մկրտել յանուն Հօր և
Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

# Գլ. Ի.

## Համբարձումն Քրիստոսի։

Հ. Յիսուս ե՞րբ համբարձաւ։
Պ. Քառասներորդ օրը՝ յետ յարութեան։
Հ. Յո՞ր տեղէն։
Պ. Ձիթենեաց լեռնէն, որ մօտ է Երուսաղէմի և Բեթանիայի։
Հ. Ո՞յք տեսին զՅիսուսի համբառնալը։
Պ. Նորա աշակերտքն։
Հ. Զի՞նչ խոստացաւ նոցա Յիսուս համբառնալոյ ժամանակը։
Պ. Ուղարկել զՀոգին սուրբ՝ զնոսա մխիթարելոյ և զօրացուցանելոյ հա-

մար ։

Հ. Ի՞նչպէս եղև Յիսուսի համբարձումն ։

Պ. Յիսուս զիւր աշակերտները առաւ տարաւ Ձիթենեաց լեառը, և յետ օրհնելոյ զնոսա անդ՝ վերացաւ յերկինս, և ամպոց միջէն անցանելով՝ եղև աներևոյթ ։

Հ. Այլ ի՞նչ տեսիլք եղև անդ ։

Պ. Երբ որ աշակերտքն աչքերնին դէպ յերկինս ցցած՝ նայէին, երևեցան նոցա երկու հրեշտակք մարդոյ կերպարանաւ սպիտակ շորեր հագած ։

Հ. Աշակերտաց բան ասացի՞ն նոքա ։

Պ. Այո՛ «Ա՛յր Գալիլեացիք, ասացին, ի՞նչ զարմացած յերկինս նայիք. այս Յիսուս՝ որ վերացաւ, դարձեալ մի օր գալոց է իւր փառօքն» ։

Հ. Այժմ ո՞ւր է Յիսուս ։

Պ. Ի՛ Հօր Ա՟Յ աջ կողմը նստած, այսինքն՝ իւր Աստուածային յաւիտենական փառաց մէջ ։

## Յաւելուած

ա. Պատասխանիք կամ վճռական բանք Քրիստոսի ։

Հ. Երբ որ Հրեայք բամբասեցին ըղՅիսուս՝ Մատթէոս մաքսաւորի տանը կերակուր ուտելոյն համար, Յիսուս ի՞նչ ասաց ։

Պ. «Ողջոց մարդոյ՝ բժիշկ հարկաւոր չէ, ասաց, այլ՝ հիւանդաց ։ Այնպէս և ես եկած եմ՝ ոչ զարդարները՝

այլ զմեղաւորները կոչելու համար»։

---

Հ. Երբ որ Հրէայք հարցուցին Յիսուսի՝ թէ շաբաթ օրը արժա՞ն է բժշկութիւն գործել, Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ։

Պ. Դուք զձեր ոչխարը՝ որ փոսի մէջ անկած լինի՝ շաբաթ օրը դուրս չէ՞ք հաներ, ասաց։ Եթէ այդ արժան է, ապա և զմարդ բժշկելն»։

---

Հ. Երբ որ Յովհաննու Մկրտչի հրամանաւ՝ նորա աշակերտաց երկուքն եկին հարցուցին Յիսուսի, թէ դո՞ւ ես Մեսիայն, թէ ուրիշի սպասեմք՝ Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ։

Պ. «Գնացէք, ասաց, պատմեցէք Յով-
հաննու ինչ որ լսեցիք և տեսիք.
ահա՛ կոյրքն տեսանեն, կաղքն գնան,
բորոտքն սրբին, խուլքն լսեն,
և այլն»:

---

Հ. Երբ որ Յիսուսի աշակերտքն հար-
ցուցին նմա՝ թէ ինչ է պատճառն
որ մեք զքո բժշկած դիւահարը
չկարացաք բժշկել, նա ինչ ասաց:
Պ. Մեր պատճառն ձեր թերահա-
ւատութիւնն է, ասաց: Եթէ մա-
նանեխի չափ հաւատք ունենայք,
և ասէք լեռանը՝ թէ տեղէդ ելի՛ր,
ելանէ. և ո՛չ մի բան անկարելի
չլինիր ձեզ.

---

Հ. Երբ որ Յիսուսի աշակերտքն կամեցան գիտել՝ թէ. իւրեանց միջէն ո՞վ մեծ լինելոց է արքայութեան մէջ, Յիսուս ի՞նչ արար, և ի՞նչ ասաց նոցա։

Պ. Զփոքրիկ տղայ մի կանչելով՝ եցոյց նոցա, և ասաց. «Եթէ դուք այս տղայիս պէս խոնարհ և անմեղ չ՛լինիք, յարքայութիւն չէք կարող մտանել. ո՛վ խոնարհեցուցանէ զինքն սորա պէս՝ նա է մեծ արքայութեան մէջ»։

---

Հ. Երբ որ Յիսուսի աշակերտքն զմանր տղայքը արգելեցին՝ որ Յիսուսի չ՛մօտենան, նեղութիւն չտան, Յիսուս ի՞նչ ասաց, և ի՞նչ արար։

Պ. «Թողէք, ասաց, որ գան. արքայու-թիւնն այդպիսեաց է»։ Իսկ ըզ-տղայքը իւր գիրկը առնելով օրհնեց։

---

Հ. Իրբ որ Հրեայք տաճարի սրահին մէջ ասացին Յիսուսի՝ «եթէ դու ես Մեսիայն, յայտնէ մեզ»։ Յի-սուս ի՞նչ ասաց։

Պ. «Ես յայտնած եմ, ասաց, և իմ գործքս վկայեն՝ որ ես որդի եմ Աստուծոյ. բայց դուք չէք հա-ւատալ, որովհետև իմ ոչխար-ներէս չէք»։

---

Հ. Իրբ որ հարուստ երիտասարդն հարցոյց Յիսուսի՝ թէ յարքայու-

թիւն երթալոյ համար ի՞նչ պէտք է գործել, Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ ։

Պ. Աստուծոյ պատուիրանքը պահէ, ասաց ։ Բայց որովհետեւ յայտնեց երիտասարդն՝ թէ մանկութենէ ժամանակէն պատուիրանապահ եղած է միշտ, զայս խրատը եւս տուաւ նմա Յիսուս. «Եթէ կամիս կատարեալ լինիլ, զբոլոր հարստութիւնդ աղքատաց տուր, եւ եկ իմ ետեւէս» ։ Երիտասարդին շատ ծանր թուեցաւ այս խօսքս. ուստի գլուխը կախելով գնաց ։ Յայնժամ եւ Յիսուս ասաց զայս բանս. «Աւելի հեշտ է հաստ չուանին ասեղի ծակէն անցանել, քան հարուստ մարդոյ արքայութիւն մտանել» ։

Հ. Երբ որ Յիսուսի աշակերտքն զարմացան՝ թզենւոյն (զոր նա անիծեր էր) շուտով չորանալոյն համար, Յիսուս ի՞նչ ասաց նոցա։

Պ. «Դուք ևս, ասաց, եթէ հաւատք ունենայք և չերկմտիք, զամէն բան կարող էք առնել. եթէ լեռանդ ասէք՝ վերցուի՛ր, և ծովը անկի՛ր՝ անկանի»։

---

Հ. Երբ որ քահանայապետքն և դպիրքըն հարցուցին Յիսուսի՝ թէ դու որո՞վ իշխանութեամբ քարոզես և ուսուցանես, կամ թէ՝ ո՞վ տուաւ քեզ զայդ իշխանութիւնը, Յիսուս ի՞նչ պատասխանեց։

Պ. «Ես ևս ձեզ բան մի հարցանեմ,

տայց, և դուք պատասխանը տուէք. Յովհաննու մկրտութիւնն (այսինքն՝ մկրտելն զմարդիկ) յերկնի՞ց (յԱստուծո՞յ) էր, թէ ՚ի մարդոց»։ Եւ որովհետև նոքա այս բանիս վերայ մտածելէն յետոյ՝ «չգիտեմք» ասացին, այն պատճառաւ և Յիսուս պապանձեցոյց զնոսա՝ զա՛յս պատասխանելով. «Ուրեմն ես ևս չասեմ ձեզ՝ որո՛վ իշխանութեամբ զայս առնեմ»։

---

Հ. Երբ որ փարիսեցիք և Սադուկեցիք չարամտութեամբ հարցուցին Յիսուսի՝ թէ պէ՞տք է հարկ տալ Հռովմայեցւոց կայսեր, թէ ոչ, Յիսուս ի՞նչ արար, և ի՞նչ պատասխանեց։

Պ. Ըերբել տուաւ զդահեկան մի, և հարցուց «Այսոր վերայ եղած պատկերն կամ գիրն որո՞յ է»։ Երբ որ ասացին «Կայսերն է», «Գնացէք ուրեմն, ասաց, զկայսերը կայսեր տուէք, և զԱստուծոյնը՝ Աստուծոյ»։

---

Հ. Յիսուս երբ որ տեսաւ՝ թէ այրի կին մի երկու լումայ ձգեց տաճարի գանձանակին մէջ, ի՞նչ ասաց այնոր համար։

Պ. «Այս կինս, ասաց, քան զամէն փող ձգողները աւելի՛ ձգեց. վասն զի նոքա զիւրեանց հարստութեանց աւելորդը ձգեցին, բայց սա զիւր բոլոր ունեցածը տուաւ։

---

Հ. Երբ որ Յիսուսի աշակերտքն տաճարի գեղեցիկ քարերու և շինութեան վերայ զարմացան, Յիսուս ի՞նչ ասաց նոցա։

Պ. «Գալոց է, ասաց, այնպիսի ժամանակ, որ այդ տեղ քար քարի վերայ չպիտի մնայ»։

---

Հ. Երբ որ Պետրոս զՅիսուս՝ Որդի Աստուծոյ դաւանեց, Յիսուս ի՞նչ ասաց նմա։

Պ. «Երանի քեզ, ասաց, Սիմոն որդի Յովնանու(*). վասն զի մարմինն և արիւնն չյայտնեց քեզ զայդ բանը,

---

(*)Պետրոսի առաջին անունն Սիմոն կամ Շմաւոն էր, զոր Քրիստոս փոխեց՝ Կեփաս կոչելով (Յովհ. ա. 42). որ յասորւոց լեզուէ 'ի յունականն թարգմանի Պետրոս, և 'ի Հայկականն՝ Վէմ։

այլ իմ Հայրն՝ որ յերկինս է. դու վէմ ես, և ես այդ վիմի վերայ պէտք է շինեմ զիմ եկեղեցին, և դժոխոց դրունքն կարողանալու չեն զնա յաղթահարելոյ»։

---

Հ. Երբ որ Կայիափա քահանայապետն հարցոյց Յիսուսի՝ թէ դու Աստուածոյ որդի՞ ես, Յիսուս ինչ պատասխան տուաւ։

Պ. «Դու ասացեր, ասաց, և վերջին դատաստանի օրը զիմ փառքս պէտք է տեսանէք։

---

Հ. Երբ որ Փարիսեցիքն և դպիրքն հարցուցին Յիսուսի՝ թէ ինչո՞ւ

համար քո աշակերտքն չլուացած ձեռօք հաց ուտեն, Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ ։

Պ. «Անլուայ ձեռօք հաց ուտելն, ա-սաց, չպղծեր զմարդը, այլ սրտի մէջ եղած չար խորհուրդքն պղծեն» ։

---

Հ. Երբ որ հարցուցին Յիսուսի՝ Նորա աշակերտքն, թէ ե՞րբ պէտք է լինի իւր երկրորդ գալուստն կամ աշ-խարհիս վերջն, Յիսուս ի՞նչ ասաց նոցա ։

Պ. «Ձեզ հարկաւոր չէ՛, ասաց, զայդ բանը գիտել. Աստուծոյ Հօր կա-մաց կախեալ է այդ. բայց այն ժա-մանակ պէտք է լինի՝ երբ որ ոչ ոք չկարծեր» ։

## Է. Առակախօսութիւնք Քրիստոսի։

Հ. Ի՞նչպէս է երկուց պարտապանաց առակն՝ զոր խօսեցաւ Յիսուս։

Պ. Մի մարդոյ երկու հոգի պարտականք էին. մինն պարտք ունէր հինգ հարիւր դահեկան, և միւսն՝ յիսուն։ Պարտուց տէրն զերկոկունց ևս պարտքը շնորհեց (պաղշեց)։ Այս երկուց պարտապանաց ո՞րն առաւել պէտք է սիրէ զպարտուց տէրը։ Յայտ է թէ նա՝ որոյ պարտքն շատ էր (Ղուկ. Է. 41—43)։

Հ. Ինչո՞ւ համար խօսեցաւ Յիսուս զայդ առակդ։

Պ. Հասկացուցանելոյ համար՝ թէ շատ մեղաց տէր մարդն ևս թողու-

թիւն գտանէ՝ որ մեծագոյն սէր և ջերմեռանդութիւն ունենայ առ Աստուած։

---

Հ. Ի՞նչպէս խօսեցաւ Յիսուս սերմանացանի առակը։

Պ. «Այրը որ սերմանացանի (երկրագործի) մինն, ասաց, սերմն ցանէր, սերմերէն ոմն ճանապարհի վերայ անկանելով՝ թռչնոց կերակուր եղև. ոմն ապառաժ (պինտ կամ կարծր) տեղ անկանելով արմատ չբռնեց, չորացաւ. ոմն ևս փշոց մէջ մնալով՝ խեղդուեցաւ. բայց լաւ և փափուկ հողոյ վերայ անկածներն պտղաբեր եղեն՝ մի հատի տեղ երեսուն տալով կամ վաթ-

սուն կամ հարիւր»: (Ղուկ. Ը. 4—8):

Հ. Օրայդ առակդ մեկնե՞ց Յիսուս:

Պ. Այո՛. «Սերմերն, ասաց, Աստուծոյ բանքն են ցանուած. գետինքն՝ մարդոց սիրտքն են: Անհաւատ՝ թուլահաւատ՝ աշխարհասէր և փառասէր մարդիկն առաքինութիւն չեն կարող գործել: Բայց բարի և ջերմեռանդ սիրտ ունողն՝ ուրախութեամբ լսելով զԱստուծոյ պատուիրանքը՝ առատ առատ առաքինական պտուղ տայ համբերութեամբ:

---

Հ. Ասա՛ զանգութ ծառայի առակը՝ որ տասն հազար քանքար պարտք ունէր:

Գ. Թագաւոր մի իմանալով՝ որ իւր ծառայից մինն տասն հազար քանքար պարտք ունի իւրեան, հրամայեց՝ որ զինքը տնով տեղով վաճառեն, և զպարտքը վճարել տան: Ծառայն Թագաւորի յոտքն ընկաւ, աղաչեց՝ որ ժամանակ տայ հատուցանելոյ: Թագաւորն ևս գթալով՝ զբոլոր պարտքը շնորհեց: Այն ծառայն յայլ մի մարդոյ առնելիք ունէր հարիւր դահեկան. պարտապանն աղաչեց՝ որ փոքր մի համբերէ, և շուտով չպահանջէ զառնելիքը: Բայց ծառայն չլսեց զնորա աղաչանքը, և բռնեց բանտը՝ դրաւ զնա: Ծառայի ընկերքն ցաւելով խեղճին վերայ՝ գնացին յայտնեցին Թագաւորին

զայս անգթութիւնը ։ Կանչեց Թա-գաւորն զծառայն. «Ո՛վ ծառայ չար» ա-սաց, ես քու աղաչանացդ համար ըզ-տասն հազար քանքար պարտքդ շնոր-հեցի. պէտք չէ՞ր որ դու ալ հարիւր դահեկան առնելիքդ թողուիր» ։ Ու յետոյ հրամայեց որ կապեն զնա, մինչև զիւր բոլոր պարտքը վճա-րէ (Մատ. ժը. 23—34) ։

Հ. Ի՞նչ յայտնել կամեցաւ Յիսուս այդ առակաւդ.

Պ. Զայս թէ՝ Աստուած մեր յանցա-նաց ներող չլինիր, եթէ մեք մի-մեանց յանցանաց չներեմք ։

---

Հ. Ասա՛ զՍամարացւոյ առակը՝ որ զվիրաւորը դարմանեց ։

Պ. Մի մարդ Երուսաղեմէ Երի-
քով գնալու ժամանակը՝ աւազակաց
հանդիպելով վիրաւորեցաւ, ան-
կաւ կիսամեռ ճանապարհի վերայ։
Անցաւ այն տեղէն նախ քահանայ
մի, ապա Ղևտացի մի. երկուքն ևս
տեսին զվիրաւորը՝ բայց թողին գնա-
ցին՝ առանց ամենևին օգնելու։ Ե-
կաւ յետոյ Սամարացի մի, վերցոյց
զանկեալ վիրաւորը, կապեց զվէր-
քը, դրաւ ձիոյն վերայ, և տարաւ
հասոյց մինչև 'ի պանդոկը. երկու
դահեկան ևս պանդոկապետին տու-
աւ՝ որ հոգ տանի զվիրաւորը դար-
մանելոյ. այլ և ասաց, Եթէ աւե-
լի ևս ծախք հարկաւորի՝ արա, և
ես կրկին տեղս դառնալու ժամա-
նակիս վճարեմ (Ղուկ. Ժ. 29—35)։

Հ. Ի՞նչ հասկացուցանել կամեցաւ Յիսուս՝ զայդ առակդ պատմելով:

Պ. Զայս թէ՝ հարկ է մարդոց՝ մարդասէր լինել, և ցաւակցաբար օգնել ընկերին. և թէ՝ բարեգործելոյ կարող մարդն՝ եթէ չկամենայ բարի գործ գործել՝ մեղանչէ՛:

---

Հ. Ասա՛ զհարիւր ոչխարաց առակը:

Պ. «Ի՞նչպէս թուի ձեզ, ասաց Յիսուս՝ իւր աշակերտացն, եթէ մի մարդ հարիւր ոչխար ունենայ, և այն ոչխարաց մինն մոլորի, չէ՞ որ զիննսուն և զինն ոչխարը թողու լերանց վերայ, և երթայ որոնէ զմի մոլորեալը. և եթէ կարողանայ գըտանել, յայտնի է որ՝ առաւել ու-

րախ լինի այն միոյն վերայ, քան թէ իննսուն և իննին,,(Մատ. ԺԸ. 12. 13) :

Հ. Յիսուս ի՞նչ յայտնել կամեցաւ այդ առակախօսութեամբ :

Պ. Զայս թէ՝ ինքն յաշխարհ եկած է՝ զմեղօք մոլորեալ և կորուսեալ մարդիկը դարձուցանելոյ համար. և թէ՝ Հօր Աստուծոյ կամքն այն է՝ որ ՚ի մարդոց և ոչ մինն չկորն-չի :

---

Հ. Զանառակ որդւոյ առակը ի՞նչ պէս պատմեց Յիսուս :

Պ. «Մի մարդ, ասաց, երկու որդի ունէր : Փոքր որդին խնդրեց առաւ յիւր հօրէն զիւր ժառանգութեան

բաժինը, և հեռի քաղաք գնալով՝ այնպէս անառակ կեանք վարեց՝ որ զբոլոր ունեցածը ծախեց (փճա-ցուց). ուստի գնաց այլ մարդու մօտ խոզարած եղև, բայց այնքան ողոր-մելի՝ որ խոզից կերակրոյն ևս (որ էր եղջիւր) (*) կարօտ մնայր։ Այս-պիսի թշուառութեան մէջ միտքը բերաւ զիւր հօր ծառայքը՝ որ հանգիստ և անկարօտ կեանք ու-նէին. յոյսը չկտրեց, գնաց դար-ձեալ հօրը մօտ՝ աղաչելոյ համար՝ որ զինքը ընդունի իբրև զմի ծա-ռայ։ Նոյն որ տեսաւ զնա հայրն հեռուէն՝ եկաւ ընդ առաջ որդ-

(*) Եղջիւր՝ պտուղ է. Տաճ. քէչի պոյնուզու.

ւոյն, փարեցաւ վզէն ։ Որդին ամա-
չելով «մեղայ ասաց, հայր, զիս
ծառայի տեղ ընդունէ» ։ Զայս
լսելով հայրն՝ գութն աւելի շար-
ժեցաւ. հագոյց նմա ազնիւ շորեր,
և զգիրացուցած եզը մորթել տա-
լով՝ ուրախութեան սեղան պատ-
րաստեց՝ զկորուսած որդին գտա-
նելոյն համար ։ Այն ժամանակը մեծ
որդին ևս (որ յագարակումն էր)՝ի
տուն եկաւ. բայց փոխանակ ուրա-
խակից լինելոյ՝ սկսաւ բարկանալ և
տրտնջալ. «Այսչափ ժամանակ է,
ասաց հօրը, որ ես քեզ հնազանդ եմ
եղած, և դու ուլ մի ևս ինձ չես տը-
ւած. բայց այժմ այս որդւոյդ հա-
մար՝ որ անառակութ՟բ զքո ստացու-
ւածքդ ոչնչացոյց, զգիրացուցած

եզը մորթել տուիր։ Պատասխան տուաւ նմա հայրն. «Որդեակ, իմ ամէն ունեցածներս քո են. բայց սա կորուսեալ էր՝ և գտանուեցաւ. վասըն որոյ այժմ պէտք է ուրախանալ»։ (Ղուկ. ԺԵ. 11—30)։

Հ. Յիսուս ինչո՞ւ համար ասաց զայդ առակդ։

Պ. Ցուցանելու համար՝ թէ Աստուած այնպէս ողորմած է, որ չկամիր զմեղաւորի կորուստը, այլ զնորա դառնալը և զկեալը։

---

Հ. Ասա՛ զՏնտեսի առակը։

Պ. Մեծատուն մարդ մի լսելով՝ թէ իւր Տնտեսն զուր ծախքեր արարեալ է, կամեցաւ զիւր պաշտօնէն

հանել ։ Տնտեսն մտածելով՝ թէ յետոյ ապրուստի կարօտ մնալոց է, կանչեց զիւր տիրոջ պարտականները, և զնոցա պարտուց մի մի մասը պակասեցոյց ։ Տէրն երբ որ լսեց զնորա այսպիսի խելացութիւնը՝ գովեց զնա (Ղուկ. ԺԶ. 1—8) ։

Հ. Ինչո՞ւ համար ասաց Յիսուս զայդ առակդ ։

Պ. Անոր համար՝ որ հասկացուցանէ, թէ մեք ևս պարտիմք 'ի ձեռն դըրամոց կամ մարմնաւոր ողորմութեց զաղքատս շահել. և թէ՝ չէ՛ կարելի Ա՟Ծ ծառայել և մամոնայի ։

---

Հ. Ասա՛ զՄեծատան և զՂազարոսի առակը ։

Պ. Մեծատուն մարդ մի փառաւոր շու-
րերով զարդարած՝ ամէն օր ուտե-
լով խմելով ուրախութեան մէջ
էր. Նորա դրան մօտ և նստէր աղ-
քատ Ղազարոսն՝ ընչափ ողորմելի՛
որ նորա սեղանոյ հացի փշրանացն
կարօտ էր, և շունքն լիզէին զնորա
վէրքը: Երկուքն ևս մեռան. Մե-
ծատունն տեսաւ դժոխոց միջէն
զՂազարը Աբրահամու գիրկը նըս-
տած (յարքայութեան), սկսաւ ա-
ղաղակել. «Հա՛յր Աբրահամ, ողոր-
մի՛ր ինձ, ուղարկէ՛ զՂազարը՝ որ
զիւր մատի ծայրը ջրով թրջէ և
զիմ պապակեալ (չորացած՝ այրած)
լեզուս զովացուցանէ»: «Այդ ան-
կարելի՛ է, ասաց Աբրահամ. մի՛տքդ
բեր դու կենացդ մէջ ունեցած

վայելմունքդ, և զՂազարոսն, չարչարանքը»: Դա՛րձեալ աղաղակեց Մեծատունն. «Աղաչեմ զքեզ, հա՛յր, ուղարկէ՛ զայդ մարդը գո՛նէ քիմ հօրս տունը, որ եղբարցս խմաց տայ՝ չլինի թէ նոքա ևս գան կայս տանջանաց տեղս»: Պատասխան տըւաւ Աբրահամ. «Ունին նոքա ըզՄովսէսի և զայլ մարգարէից գըրեանքը, թո՛ղ կարդան հասկանան»: «Ո՛չ, այդպէս չլինիր ասաց Մեծատունն, պէտք է որ մեռելներից մինն երթայ քարոզէ նոցա՝ որ ապաշխարեն»: Բայց Աբրահամ կըտրեց զնորա յոյսը այս վերջին խօսքովս. «Եթէ նոքա զմարգարէից գըրած խրատները չե՛ն լսեր, յայտնի է որ՝ եթէ մեռելներից մինն ևս եր-

թայ՝ չէ՛ն լսեր,, (Ղուկ. ԺԶ. 19—31)։

Հ. Ի՞նչ յայտնել կամեցաւ Յիսուս այդ առակաւդ։

Պ. Ա՛յս թէ՝ պէտք չէ՛ մարդոց զիւր յոյսը բոլորովի՛ն այս աշխարհիս մարմնաւոր վայելչութեանց և փառաց վերայ հաստատել։

---

Հ. Ըսա՛ զԴատաւորի առակը։

Պ. Մի՛ քաղաքումը դատաւոր մի կայր, որ ո՛չ յԱստուծոյ երկիւղ ունէր, և ո՛չ ՚ի մարդոյ ամաչէր։ Այրի.կին մի ևս գայր յամենայն օր նորա մօտ, և աղաչէր՝ որ զիւր դատաստանը կտրէ։ Երկար ժամանակ դատաւորըն հոգ չունեցաւ այդոր համար. բայց կինն այնչափ գնաց եկաւ և

աղաչեց՝, որ դատաւորն ձանձրա֊
նալով՝ ինքնին սկսաւ ասել միտ֊
քըն. Թէպէտ յաստուծոյ երկիւղ
չունիմ, և ոչ 'ի մարդոյ՝ ամօթ,
բայց զայս կնոջ դատաստանը վեր֊
ջացուցանեմ, որ ձեռքէն ազատիմ
(Ղուկ. ժը. 1—5):

Հ. Ի՞նչ իմացոյց Յիսուս այդ առա֊
կաւդ:

Պ. Զայս թէ՝ յոյժ հարկաւոր է մեզ
յամենայն ժամ աղօթել առ Աստ֊
ուած. որպէս զի և նա ողորմի մեզ՝
մեր անդադար աղաչանաց լսելով:

---

Հ. Փարիսեցւոյ և Մաքսաւորի առա֊
կըն ի՞նչպէս է:

Պ. Փարիսեցին և Մաքսաւորն գնացին

՚ի տաճարն. Փարիսեցին սկսաւ ա-
ղօթել այսպէս. «Աստուած իմ,
փա՜ռք քեզ, որ անիրաւ և յափշ-
տակող չեմ այլ մարդոց պէս կամ
այս Մաքսաւորի նման, այլ մի շա-
բաթումը երկու անգամ պահք պա-
հեմ, և տասանորդ տամ իմ ու-
նեցածներից»: Բայց Մաքսաւորն
զինքը մեղաւոր ճանաչելով՝ զիւր
աչքը ևս չկամէր դէպ ՚ի վեր բարձ-
րացուցանել, այլ զկուրծքը ծե-
ծելով ասէր. «Աստուած, մեղա-
ւորիս ներող եղիր»: Ուստի և քան
զփարիսեցին արդար համարուեցաւ
առաջի Աստուծոյ (Ղուկ. ժը.
9—14):

Հ. Ի՞նչ յայտնել կամեցաւ Յիսուս
այդ առակաւդ:

Գ․ Օրայս թէ՝ մեղաւոր մարդն եթէ
խոնարհ սրտիւ մեղայ ասէ, և յԱս-
տուծոյ թողութիւն խնդրէ, հաճոյ
լինի նմա․ իսկ արդարն եթէ ամ-
բարտաւանութբ պարծենայ՝ դա-
տապարտի՛ ։

---

Հ․ Ա՛սա զՏանտիրոջ և զՄշակաց ա-
ռակը ։

Գ․ Տանուտէր մի յառաւօտուն ելաւ
մշակներ վարձեց մի մի դահեկանի,
և ուղարկեց յիւր այգին, յետոյ
յերրորդ՝ ՚ի վեցերորդ՝ յիններորդ
և ՚ի մետասաներորդ ժամուն ևս
այլ պարապ մարդիկներ գտաւ, և
ուղարկեց հետ զհետէ յայգին՝ ա-
սելով նոցա․ «Գնացէք գործե-

ցէք, և զձեր վարձքը ինչ որ արժան է՝ տամ»: Յերեկոյին երբ որ դարձան ամենքն յայգիէն, հրամայեց Տանուտէրն իւր տնտեսին՝ որ իւրաքանչիւր մշակի մի մի դահեկան տայ: Զայս տեսանելով առաջ վարձուած մշակքն՝ սկսան տրտնջալ. «Ինչո՞ւ համար, ասացին, մի ժամ գործող մշակքն ևս այնչափ վարձք պիտի առնուն, որչափ մեք՝ որ բոլոր օրը աշխատեցաք»: Բայց Տանուտէրն դարձաւ ասաց այն տըրտնջողաց միոյն. «Ը՛նկեր, քեզ ի՞նչ վնաս կայ. չէ՞ որ ես քեզ մի դահեկան վարձք խոստացած եմ, առ զքո վարձքդ, և գնա. միթէ ես իրաւունք չունի՞մ տալոյ իմ քսակէս ում ինչ որ կամենամ (Մատ. Ի. 1—15):

Հ. Յիսուս ի՞նչ յայտնել կամեցաւ զայդ առակդ ասելով ։

Պ. Զայս թէ՝ շատ մարդիկ թէպէտ անագան (ուշ), բայց 'ի սրտէ յոյժ ջերմեռանդ և մօտ լինելով Աստուծոյ՝ մեծամեծ շնորհաց արժանանան, որովհետև բազում են կոչեցեալք, և սակաւ են ընտրեալք ։

---

Հ. Ի՞նչպէս է քանքարաշահ ծառայից և՝ քանքարաթագոյց ծառայի առակն ։

Պ. Ազնուական մարդ մի երբոր պատրաստեալ էր հեռի երկիր գնալոյ, կանչեց զիւր ծառայքը, և իւրաքանչիւրոց առանձին առանձին փող (ըստակ) բաժանեց. միոյն տուաւ

հինգ քանքար, միոյն՝ երկու, և միոյն՝ մի․ և պատուիրեց որ շահեցուցանեն մինչև իւր վերադառնալը։ Յետ վերադառնալոյն կանչեց զծառայքը, կամեցաւ իմանալ, թէ ո՛վ ո՛րքան շահեցուցած է զիւր առածը։ Հինգ քանքար առնողն՝ հինգ ևս շահ բերաւ․ և երկու առնողն՝ երկու ևս շահ․ ուստի երկուքն ևս գովութիւն լսեցին, և պատուեցան։ Իսկ երրորդն՝ որ մի քանքար առած էր, բերաւ տուաւ զքանքարը՝ ասելով․ “Տէ՛ր, որովհետև գիտէի՝ որ դու խիստ մարդ ես, տարայ թաղեցի զիմ առած փողը գետնի տակ՝ որ չկորուսանեմ, և այժմ բերի, ա՛ռ զտուածդ”։ Երբ որ զայս բանը լսեց Տէրն՝ բար-

կացաւ. «Ո՛վ չար և ծոյլ ծառայ, ասաց. եթէ գիտէիր՝ որ խիստ մարդ եմ ես, ինչո՞ւ համար զիմ տուած քանքարը սեղանաւորաց չըտուիր, որ ես այժմ տոկոսեօք (շահով) պահանջէի»: Զայս ասելով՝ դո՛ւրս ձգել տուաւ զքանքարաթագոյց ծառայն, և զվտողը նորա ձեռքէն առնլով՝ տուաւ միւսոյն՝ որ զտասն քանքարը ունէր (Մատ. իե. 14=28):

Հ. Յիսուս զայդ առակդ պատմելով՝ ի՞նչ կամեցաւ հասկացուցանել:

Պ. Զայս թէ՝ Ա՟ծ արդարութեամբ դատո՛ղ է, և կամի՝ որ ամենայն մարդ զիւր ընդունած շնորհքը աշխատասիրութեամբ աճեցուցանէ, և հաճեցուցանողն արժանի՛ է պատժոյ:

Հ. Ասա՛ զերկուց որդւոց առակը։

Պ. Մարդ մի՝ երկու որդի ունէր. երկոցունց եւ հրամայեց որ երթան յայգին՝ գործեն։ Առաջինն «երթամ», ասաց, բայց չգնաց։ Երկրորդըն «չերթամ», ասաց, բայց յետոյ զղջացաւ՝ և գնաց (Մատ. իա. 28—30)։

Հ. Զայդ առակդ ինչո՞ւ համար ասաց Յիսուս։

Պ. Յանդիմանելոյ համար զՓարիսեցիքը և զդպիրքը, որ պարծէին՝ թէ ինքեանք Աստուծոյ հնազանդ որդիքն են և ճշմարիտ Աստուածապաշտք. բայց զԱստուծոյ պատուիրանքը՝ ինչպէս արժան էր՝ չպահէին։

Հ. Ո՞ւմ զայգի տնկողն և զչար մշակաց առակը ։

Պ. Մարդ մի այգի տնկեց և յանձնեց մշակաց. յետոյ երբ պտղոյ ժամանակն եկաւ, ուղարկեց զիւր ծառայքը՝ որ զպտուղը քաղեն ։ Բայց մշակքն զծառայից մինը չարչարեցին, զմինը սպանեցին, և զմինը քարկոծեցին ։ Այգւոյ տէրն այլ ծառայք ուղարկեց. բայց նոցա ևս այնպէս արարին ։ Վերջը զիւր որդին ուղարկեց՝ կարծելով թէ ամաչեն 'ի նմանէ. բայց երբ որ տեսին զնա մշակքն՝ այգիէն դուրս հանեցին և սպանեցին, որ զայգին ինքեանք ժառանգեն ։ Եւ որովհետև այս այսպէս եղև, այգւոյ տէրն ի՞նչ պէտք է առնէ. — յայտ-

նէ՛ է որ՝ չարաչա՛ր պէտք է կորուսանէ զայն չարագործ մշակքը, և զայգին տալո՛ց է այլոց մշակաց՝ որ ՚ի ժամանակին տան իւրեան զպտուղը (Մատ. իա. 33—41):

Հ. Ի՞նչ հասկացոյց Յիսուս այդ առակաւդ:

Պ. Ցո՛յս թէ՝ Աստուած զմարգարէքը ուղարկեց Հրէից ազգին. բայց Հրէայք չարչարեցին և սպանեցին զնոսա. այժմ ես եկած եմ, զիս ևս սպանանել կամին: Աւստի և Աստուծոյ արքայութիւնն պիտի վերացուի ՚ի նոցանէ, և տուեալ լինի այն ազգաց՝ որ Աստուածպաշտութեան պտուղ տան:

Հ. Պատմէ՛ զԹագաւորի որդւոյն հարսանեաց առակը։

Պ. Թագաւոր մի իւր որդւոյն հարսանիք արար, և ուղարկեց զիւր ծառայքը՝ որ զբարեկամքը հրաւիրեն. բայց ՚ի բարեկամաց ոմանք մի մի պատճառաւ հրաժարեցան ՚ի գալոյ, ոմանք ևս բռնեցին զծառայքը և սպանեցին։ Զայս լսելով Թագաւորն՝ զինուորք ուղարկեց՝ ջարդել տուաւ զամենքը, և զնոցա քաղաքը այրեց։

Յետոյ փողոցներէն՝ զանցորդները ներս կանչել տուաւ. և տեսանելով որ մինն հարսանեաց հանդերձ հագած չէ, Ը՛նկեր, ասաց նմա, եթէ հարսանեաց հանդերձ չունէիր, ինչո՞ւ համար մտար յայս տե-

ղըսյ։ Պապանձեցաւ մարդն, չկարաց
պատասխան տալ ։ Աւստի հրամայեց
Թագաւորն՝ որ զնորա ձեռները և
ոտները կապելով՝ դուրս ձգեն զին-
քը (Մատ. ԻԲ. 2—13) ։

Հ. Յիսուս ի՞նչ հասկացուց զայդ ա-
ռակը խօսելով ։

Պ. Զայս թէ՝ Հրէայք զինքը անար-
գելով՝ պատժոյ արժանի են. և թէ՝
Աստուծոյ արքայութեան մէջ՝ մի-
այն առաքինութեամբ զարդարեալ
հոգին տեղ ունի ։

---

Հ. Ըսա՛ զտասն կուսանաց առակը ։

Պ. Տասն կուսանք կային, հինգն՝ յի-
մարք, և հինգն՝ իմաստունք ։ Ասքա
ձեռքերնին լապտեր բռնած՝ ընդ ա-

առաջ ելին փեսայի և հարսին ։ Իմաստունքն այլ ամանօք ևս ձէթ առած էին իւրեանց հետ. իսկ յիմարքն չէին առած ։ Փեսայի գալն յետացաւ (ուշացաւ), և ամենքն 'ի քուն մտին (քնեցին). և կէս գիշերին ձայն եկաւ «Ելէ՛ք (վեր կացէք), ահա փեսայն գայ» ։ Ելին ամենքն, պատրաստեցին զիւրեանց լապտերքը ։ Եւ որովհետև յիմարաց լապտերքն շիջանելու մօտ էին, յիմաստնոցն իւղ խնդրեցին. բայց նոքա չտուին՝ ասելով «Կարելի՛ է թէ մեզ ևս չբաւականանայ. գնացէ՛ք գնեցէ՛ք 'ի վաճառողաց» ։ Գնացին յիմարքն. փեսայն եկաւ. և իմաստունքըն որովհետև պատրաստ էին՝ մտին փեսայի հետ հարսանիքը, և դուռն

փակեցաւ ։ Ակին յետոյ և յիմար-
քըն, սկսան դրսէն աղաչել փեսա-
յին՝ որ զդուռը բանայ. բայց նա
չբացաւ «Ո՛չ գիտեմ զձեզ» ասե-
լով (Մատ. իե. 1—12)։

Հ. Յիսուս զայդ առակը խօսելով՝ ինչ կամեցաւ յայտնել ։

Պ. Այս թէ՝ հարկ է մեզ՝ որ մեր հոգւոյ փրկութեան համար հոգալոյ գործերնիս՝ անհոգութեամբ օրէ յօր չձգեմք. այլ միշտ արթուն (այսինքն՝ զգաստ և պատրաստ) լինիմք՝ իմաստուն կուսանաց նման, որ յանմահ փեսայի առագաստէն (այսինքն՝ ՚ի Քրիստոսի արքայութենէն, չզրկուիմք ։

## Է. Քաղուածոյք

### ՚Ի կենարար վարդապետութեանց Քրիստոսի ըստ կարգի այբուբենից։

Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի. և ամենայն քաղաք կամ տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ։

Ամենայն ծառ՝ որ ոչ առնէ պտուղ բարի, հատանի և ՚ի հուր արկանի։

Ամենայն մեղք և հայհոյութիւնք թողցին մարդկան, բայց զհոգւոյն հայհոյութիւն մի՛ թողցի. . . մի՛ յայսմ աշխարհի, և մի՛ ՚ի հանդերձելումն։

Ամենայն որ առնէ զմեղս՝ ծառայ է մեղաց։

Ամենայն որ արտաքուստ ՚ի ներքս մտանէ ՚ի մարդ, ոչ կարէ զնա պղծ-

ծել . զի ոչ եթէ 'ի սիրտ նորա մտանէ , այլ յորովայն , և արտաքս ելանէ :

Ամենայն որ զչար գործէ՝ ատեայ զլոյս , և ոչ գայ առ լոյսն , զի մի՛ յանդիմանեսցին գործք նորա . իսկ որ առնէ զճշմարտութիւն , գայ առ լոյսն , զի յայտնի լիցին գործք նորա՝ թէ Աստուծով գործեցան :

Ամենայն տունկ՝ զոր ոչ տնկեաց Հայր իմ երկնաւոր , խլեսցի :

Այս է պատուէր իմ , զի սիրեսջիք զմիմեանս :

Անլուայ ձեռօք ուտել՝ ոչ պղծէ զմարդ :

Անհնարինք առ 'ի մարդկանէ , հնարաւորք են յԱստուծոյ :

Անձուկ է դուռնն , և նեղ ճանապարհն . որ տանի 'ի կեանս :

Առանց իմ ոչ ինչ կարէք առնել ։

Առաջնորդք կոյրք, որ զմժղուկս քա-մէք, և զուղտս կլանէք

Արարէք ձեզ քսակս առանց հնա-նալոյ, գանձ անպակաս յերկինս. ուր ոչ գող մերձենայ, և ոչ ցեց ապա-կանէ ։

Բազում են կոչեցեալք, և սակաւ են ընտրեալք ։

Բարի արարէք ատելեաց ձերոց ։

Բարւոք է աղ. եթէ աղն անհամես-ցի, ի՞ւ համեմեսցի ։

Գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց և ոչ ուտիճ ապականեն, և ոչ գողք ական հատանեն և գողա-նան ։

Գինի նոր 'ի տիկս նորս արկանելի է ։

Դժուարաւ մտցէ մեծատունն յար-

քայութիւն երկնից:

Դիւրին է մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել:

Դուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք զոր ես պատուիրեմ ձեզ:

Եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ հայրն ձեր երկնաւոր: Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր:

Եթէ ոչ դարձջիք, և լինիջիք իբրև զմանկտի, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից:

Եթէ ունիցիք հաւատս քան զհատ մանանխոյ, ասասջիք լերինս այսմիկ փոխեաց աստի անդր, և փոխեսցի. և ոչ ինչ անհնարին լիցի ձեզ:

Եթէ ունիցիք հաւատս քան զհատ մանանխոյ, և ասիցէք թթենւոյս այսմիկ՝ խլեաց և տնկեաց ՚ի ծովու, և հնազանդեսցի ձեզ :

Եթէ ոք զբանն իմ պահեսցէ, զմահ մի՛ տեսցէ ՚ի յաւիտեան:

Եթէ ոք կամիցի զկնի իմ գալ, ուրասցի զանձն, և առցէ զխաչ իւր՝ և եկեսցէ զկնի իմ :

Եթէ ոք սիրէ զիս, զբանն իմ պահեսցէ:

Եթէ սիրէք զիս, զպատուիրանս իմ պահեսջիք :

Եղերուք այսուհետև խորագէտք իբրև զօձս, և միամիտք իբրև զաղաւնիս :

Եղերուք գթածք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր գթած է :

Եղիցի ձեր բան, այո՛ն՝ այո, և ո՛չն՝ ո՛չ :

Երանեալ է որ ո՛չ գայթակղեսցի յիս :

Երանի՛ որոց ո՛չ իցէ տեսեալ (զիս)՝ և հաւատասցեն :

Զամենայն զոր միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս և դուք արարէք նոցա :

Զամենայն ինչ՝ զոր և խնդրիցէք յա-ղօթս հաւատովք՝ առնուցուք :

Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք զմիմեանս :

Զգո՛յշ լերուք ողորմութեան ձե-րում՝ մի՛ առնել առաջի մարդկան, որպէս թէ ՚ի ցոյց ինչ նոցա :

Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր քո, և ՚ի քում ական զգերանդ ո՛չ

նշմարես ։

Զի՞նչ օգտիցի մարդ՝ եթէ զաշխարհս ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցի ։

Ընդ ամենայն դատարկ բանի՝ զոր խօսիցին մարդիկ, տացեն համար յաւուր դատաստանի ։

Ընդարձակ է դուռնն, և համարձակ ճանապարհն, որ տանի ՚ի կորուստ ։

՚Ի բանից քոց արդարասցիս. և ՚ի բանից քոց պարտաւորեսցիս ։

՚Ի յաւելուածոյ սրտի խօսի բերան ։

՚Ի պտղոյ անտի ծառն ճանաչի ։

՚Ի պտղոյ նոցա ծանիջի՛ք զնոսա ։

՚Ի տան Հօր իմոյ օթևանք բազո՛ւմ են ։

Իւրաքանչիւր ծառ ՚ի պտղոյ իւրմէ ճանաչի ։

Լուծ իմ քաղցր է, և բեռն իմ փոքրոգի:

Խնդրեցէ՛ք՝ և տացի ձեզ, հայցեցէ՛ք՝ և գտջի՛ք, բաղխեցէ՛ք՝ և բացցի ձեզ:

Ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, և ծառ չար՝ պտուղ չար առնէ:

Ծառայ՝ որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ՝ և ո՛չ պատրաստեսցի ըստ կամաց նորա, արբցէ գան բազում: Իսկ որ ո՛չն գիտիցէ՝ և արժանի գանի ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ:

Կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ, և երկոքին ՚ի խորխորատ անկանին:

Հայեցարո՛ւք ընդ ագռաւս, զի ո՛չ սերմանեն և ո՛չ հնձեն. որոց ո՛չ գոն շտեմարանք, և ո՛չ համբարանոցք, և Աստուած կերակրէ զնոսա. ո՛րչափ ևս

առաւել զձեզ՝ որ լաւ էք քան ըզ-թռչունս :

Հայր՝ մի՛ կոչէք ձեզ յերկրի. զի ձեր՝ մի է հայր՝ որ յերկինսն է :

Հա՛ն նախ զգերանդ յականէ քում, և ապա հայեսցիս հանել զշիւղ յականէ եղբօր քո :

Հաստատուն կացէք ՚ի սէր իմ :

Հա՛րկ է գալ գայթակղութեանց. բայց վա՛յ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն գայցէ գայթակղութիւն :

Հոգի՛ է Աստուած, և երկրպագուաց նորա՝ հոգւով և ճշմարտութեամբ պա՛րտ է երկիրպագանել :

Մարգարէ յիւրում գաւառի պատիւ ո՛չ ունի :

Մարդ բարի՝ ՚ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ զբարիս :

Մարդ չար՝ 'ի չար գանձուց սրտի իւրոյ հանէ զչարիս։

Մեծն 'ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր։

Մի՛ այսուհետև հոգայցէք՝ և ասիցէք. զի՛նչ կերիցուք՝ կամ զի՛նչ արբցուք՝ կամ զի՛նչ զգեցցուք. . . . քանզի գիտէ հայրն ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն։

Մի՛ արկանէք զմարգարիտ ձեր առաջի խոզաց։

Մի՛ դատէք, զի մի՛ դատիցիք։

Մի՛ զոք կոչէք վարդապետ, զի մի է ձեր ուսուցիչ։

Մի՛ ըստ աչս դատիք, այլ ուղիղ դատաստան արարէք։

Մի՛ կոչիցիք ուսուցիչք, զի ուսուցիչ ձեր՝ Քրիստոս է։

Մի՛ տայք զսրբութիւն՝ շանց ։

Յայնժամ գիտասցեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս ։

Յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա՛ զաղքատս, և զխեղս, զկաղս և զկոյրս․ և երանելի լինիցիս․ զի ո՛չ ունին փոխարէն հատուցանելոյ քեզ․ և հատուսցի քեզ փոխարէն ՚ի յարութեան արդարոց ։

Յորժամ առնիցէք զամենայն հրամայեալսն ձեզ, ասասջիք՝ թէ ծառայք անպիտանք եմք, զոր պարտէաքն առնել՝ արարաք ։

Յորժամ կայցես յաղօթս, մուտ ՚ի սենեակ քո, և փակեա՛ զդուրս քո, և կա՛ց յաղօթս առ հայր քո ՚ի ծածուկ ։

Յորժամ կայցէք յաղօթս, մի՛ շա-

տախօսք լինիք իբրև զհեթանոսան։

Յորժամ յաղօթս կայցէք, թողուցուք եթէ ունիցիք ինչ զումեքէ. զի և Հայրն ձեր՝ որ յերկինս է՝ թողցէ ձեզ զյանցանս ձեր։

Յորժամ ողորմութիւն առնիցես, մի՛ գիտասցէ ձախ քո՝ զի՛նչ գործէ աջ քո։

Յորժամ պահիցէք, մի՛ լինիք իբրև զկեղծաւորսն տրտմեալք, որ ապականեն զերեսս իւրեանց, որպէս զի երևեսցին մարդկան՝ թէ պահիցեն։

Նովին չափով՝ որով չափէք՝ չափեսցի ձեզ։

Շաբաթ վասն մարդոյ եղև, և ո՛չ եթէ մարդ վասն շաբաթու։

Շատ է աշակերտին՝ եթէ եղիցի իբրև զվարդապետ իւր, և ծառային՝

իբրև զտէր իւր ։

Ո՛չ եթէ ՚ի փշոց քաղեն թուզ , և ո՛չ ՚ի մորենւոյ կթեն խաղող ։

Ո՛չ եկի կոչել զարդարս , այլ զմեղաւորս ։

Ո՛չ են պիտոյ բժիշկք ողջոց , այլ հիւանդաց ։

Ո՛չ է աշակերտ առաւել քան զվարդապետ , և ո՛չ ծառայ քան զտէր իւր ։

Ո՛չ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց ։

Ո՛չ է ծառայ՝ մեծ քան զտէր իւր , և ո՛չ առաքեալ՝ մեծ քան զայն՝ որ առաքեացն զնա ։

Ո՛չ է մարգարէ անարգ , բայց եթէ ՚ի գաւառի իւրում , և յազգատոհմի , և ՚ի տան իւրում ։

Ո՛չ ինչ է ՚ի ծածուկ՝ որ ո՛չ

յայտնեսցի, և գաղտնի՝ որ ոչ ծանիցի։

Ո՛չ կարէ ծառ բարի՝ պտուղ չար առնել, և ո՛չ ծառ չար՝ պտուղ բարի առնել։

Ո՛չ կարէ քաղաք թաքչել՝ որ ՚ի վերայ լերին կայցէ։

Ո՛չ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի։

Ո՛չ որ ինչ մտանէ ընդ բերան՝ պղծէ զմարդ, այլ որ ինչ ելանէ ՚ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ։

Ո՛չ ոք կարէ երկուց տերանց ծառայել, կամ զմին ատիցէ՝ և զմիւսն սիրիցէ, կամ զմին մեծարիցէ՝ և զմիւսն արհամարհիցէ։

Որ առնիցէ զկամս Հօր իմոյ որ յերկինս է, նա է իմ եղբայր՝ և քոյր և մայր։

Որ ասիցէ ցեղբայր իւր՝ յիմար, պար-
տաւոր լիցի ատենի։

Որ արբուսցէ միում 'ի փոքրկանցս
յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ մի-
այն յանուն աշակերտի, ամէ՛ն ասեմ
ձեզ՝ ոչ կորուսցէ զվարձս իւր։

Որ բարկանայ եղբօր իւրում՝ տա-
րապարտուց, պարտաւոր լիցի դատաս-
տանի։

Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնար-
հեսցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝
բարձրասցի։

Որ գնայ 'ի խաւարի, ոչ գիտէ յո
երթայ։

Որ գտանէ զանձն իւր՝ կորուսցէ
զնա, և որ կորոյս զանձն իւր վասն իմ՝
գտցէ զնա։

Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի, և

որ զիս ընդունի՝ ընդունի զառաքիչն իմ ։

Որ ինչ ՚ի մարդոյն ելանէ՝ այն պղծէ զմարդ. զի ՚ի ներքուստ ՚ի սրտէ մարդկան խորհուրդք չարութեան ելանեն ։

Որ ՚ի փոքուն հաւատարիմ է, և ՚ի բազմին հաւատարիմ է. և որ ՚ի փոքուն անիրաւ, և ՚ի բազմին անիրաւ է ։

Որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ բաղխէ՝ բացցի նմա ։

Որ կամիցի ՚ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ. և որ կամիցի ՚ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ ։

Որ կորուսցէ զանձն իւր վասն աւետարանին, ապրեցուսցէ զնա ։

Որ ոչ ընդ իս է՝ հակառակ իմ է, և որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ ։

Որ ունի զպատուիրանս իմ՝ և պահէ զնոսա, նա է որ սիրէ զիս ։

№ 2001 4087



Որ ոք գայթագղեցուսցէ զմի 'ի փոքրկանցս յիս հաւատացելոց, լաւ է նմա՝ եթէ կախիցի երկան իշոյ ընդ պարանոց նորա, և ընկղմիցի 'ի խորս ծովու։

Որով դատաստանաւ դատիք՝ դատելոց էք։

Որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ։

Որպէս կամիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արասջիք և դուք նոցա։

Ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ։

Ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա։

Չէ մարգարէ ընդունելի 'ի քաղաքի իւրում.

Չէ յարուցեալ 'ի ծնունդս կա-

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

Աւագը — ձայն. աւագը — ձայն.

Օրհնեցէք [illegible]

[illegible]

3154

3253
3254

ՀՀ Ազգային գրադարան
NL0030038

ՀՀ Ազգային գրադարան
NL0030037